ԼՂՀ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆԿԱՏՎՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԿԵՆԴԱՆԻ ՈՒԺԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿՈՒՏԱԿՈՒՄՆԵՐ

Իրադրությունը Ղարաբաղի ռազմաճակատներում շարունակում է հանգիստ մնալ: Չնայած այն բանին, որ հակամարտող կողմերը ընդհանուր առմամբ պահպանում են հրադադարի համաձայնագրի պայմանները, սակայն ադրբեջանական բանակը ժամանակ առ ժամանակ շարունակում է խախտել զինադադարը ռազմաճակատի տարբեր հատվածներում գնդակոծելով ղարաբաղյան դիրքերը: Հանրապետության պաշտպանության բանակի շտաբից ԼՂՀ մամուլի եւ լրատվության վարչությանը հայտնի է դարձել, որ ադրբեջանական բանակի կողմից գրավված Մարտակերտի շրջանի հյուսիսում տեղակայված կրակակետերից կարճատեւ գնդակոծության են ենթարկվել Թալիշ եւ Լեռնարխ բնակավայրերի ղարաբաղյան դիրքերը: Տուժածներ չկան: ԼՂՀ ՊԲ ստորաբաժանումները, խստորեն կատարելով հրամանատարության կարգադրությունը, պատասխան գործողություններ չեն ձեռնարկել: Միաժամանակ, ռազմական հետախուզության հաղորդման համաձայն, հանրապետության արեւելյան սահմաններում հակառակորդի կենդանի ուժի եւ զրահատեխնիկայի կուտակումներ եւ ակտիվ վերատեղաբաշխում է նկատվում: